

# ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԱՅԻ ԿՕՄԻՏԵՆԵՐՈՒ



ՏՊԱՐԱՆ ԶԱՅՐՆԵՐՈՂԻ

1905

# ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՕՄԻՏԵՆԵՐՈՒ



ՏՊԱՐԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»

1905



**ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ**  
**ՀԱՅ ՅԵՂԱԾ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ**  
**ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՕՄԻՏԷՆԵՐՈՒ**

Ն.Ս.ԽԱՐԱՆ.

Հայ Յեղ. Գաշնակցուքեան Ամերիկայի կոմիտէները կազմակերպած են Հ. Յ. Գ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի գերագոյն իրաւասութեան տակ, աջակցելու համար Հ. Յ. Գաշնակցուքեան հետապնդած հպատակի իրազորման, համաձայն անոր իմնական ծրագրին եւ անոր Ընդհանուր Պատգամաւորական ժողովներու որոշումներուն:

Ամերիկայի կոմիտէները — կազմակերպած 1896ին — պաշտօնապէս ճանչցած են Հ. Յ. Գ. 1898ին գումարած Բ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի կողմէն, որուն առաջին անգամ հրաւիրած էին մասնակցելու: Եւ, այդ Ընդհ. Ժողովին մշակած կանոնագրուցեան յօդ. 30ին համաձայն խմբագրած է հետեւեալ կանոնագիրը Ամերիկայի զաշնակցականներու ղեկավարուցեան համար:

# Ա.

## Անդամակցութիւն

307. 1. — Բարոյականի տէր ամէն շաբաթ հայ, առանց կրօնի և սեռի խտրութեան, կրնայ անդամակցել Ամբերկայի դաշնակցական կօմիտէի մը — եթէ սկզբունքով կ'ընդունի յեղափոխական կօիւր թիւքը ոչ ժիմին դէմ և կ'ուխտէ հաւատարիմ մնալ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնական ծրագրին ու ներկայ կանոնադրին, խղճմտօրէն կատարելով անոնց դրած պարտականութիւնները:
307. 2. — Հայաստանի ազատագրութիւնը, կամ անոր վիճակին բարելաւումը իրեն նպատակ դրած ուրիշ ո'ւէ քաղաքական կազմակերպութեան մը պատկանող անձ չի կրնար անդամակցել դաշնակցական կօմիտէի մը, մինչև վերջնապէս չխզէ իր յարաբերութիւնները և չհեռանայ իր պատկանած այդ կազմակերպութենէն:
307. 3. — Կօմիտէի անդամակցութեան թեկնածուն գրաւոր կը դիմէ իր գտնաւած վայրի կօմիտէին, յայտնելով իր տարիքը, ծննդավայրը, կանխաւ դաշնակցական եղած, կամ ուրիշ քաղաքական մարմնի մը պատկանած ըլլալը կամ ոչ, և յիշատակելով զինքը ճանչցող գէթ երկու ծանօթ և վըստահելի անձեր: Գրաւոր դիմումը նախըն-

տրելի է ներկայացնել կօմիտէի անդամի մը ձեռքով: Կօմիտէն թեկնածուի մը նկարագրի և բարոյականի մասին խորհրդակցութիւններ կատարելէ ետք (եթէ հարկը պահանջէ՝ յատուկ յանձնարմբի մը միջոցով կանխաւ քննութիւն մը կատարել տալով), բաց քէի կը դնէ անոր ընտրութիւնը: Քէներու  $\frac{2}{3}$  առաւելութեամբ կ'ընդունուի թեկնածուն: Քէտարկութեան արդիւնքը բերանացի կը հաղորդուի անոր:

307. 4. — Ամբերկայէն դուրս գտնուող ուէ դաշնակցական խմբի կամ կօմիտէի պատկանող անձ, եթէ պատշաճ վկայագիր կամ յանձնարարագիր մը չկրնայ բերել տալ կամ ներկայացնել, իբր սովորական թեկնածու կը նկատուի:
307. 5. — Մերժւած թեկնածուին անունը կօմիտէին կողմէն կը հաղորդուի Կեդրօնական և միւս քոյր կօմիտէներուն, եթէ ծանրակշիռ պատճառներով որոշ թեկնածուի մը անդամակցութիւնը վնասակար նկատուի յեղափոխութեան շահերուն:
307. 6. — Ընդունւած թեկնածուն կը հրաւիրուի կօմիտէին յաջորդ անդամական ժողովին, ուր ան իր պատին վրայ կ'ուխտէ հաւատարիմ մնալ Հայ Ազատագրութեան դատին և Հայ Յեղ. Դաշնակցութեան, և կ'ստորագրէ սոյն կանոնադրին մէկ պաշտօնական օրինակին տակ, որ կը պահուի կօմիտէին քով:

307. 7. — Ամէն թեկնածու կամ անդամ իր վայրի կօմիտէին անդամակցելու է: Երբ թեկնածու մը կամ ընկեր մը բանաւոր պատճառ մը ունի փոխանակ իր բնակած վայրի կօմիտէին, ուրիշ կօմիտէի մը անդամակցելու, ստանալու է կեդր. կօմիտէին հաւանութիւնը:

Բ.

### Տարբեր

307. 8. — Ամէն նոր ընկեր կօմիտէին մէջ ընդունւած օրը «մուտք» մը կը վճարէ կամաւոր (որ մէկ տօլարէն նւազ չի կրնար ըլլալ) և իր ընդունելութեան ժամանակին համապատասխանող եռամսեայ տուրքը կանխիկ:

307. 9. — Ամէն դաշնակցական տարեկան վեց տօլար կը վճարէ իբրև անդամավճար, և առնւազն տասը տօլար իբր զէնքի դրամ: Անդամավճարները կը դանձուին կանխիկ երեք ամիսն անգամ մը — յունւար, ապրիլ, յուլիս, հոկտեմբեր ամիսներու առաջին օրերը: Զէնքի դրամը կը հանգանակուի ամէն տարի, կօմիտէին որոշած օրը, կանխիկ, հրապարակային ժողովի մը մէջ կամ մասնաւոր կերպով:

307. 10. — Մշտական այս տուրքերէն դատ, ամէն կօմիտէ տարւէ տարի կամաւոր հանգանակութիւններ կը կատարէ ինպստ

դաշնակցական ձեռնարկներու (հրատարակութիւններ, արտասահմանի օտար փրօփականտա, բանտարկեալներ ևն), Կ. Կօմիտէի կանխաւոր հաւանութիւնն ստանալով:

307. 11. — Այն դաշնակցականները, որոնց կօմիտէն կազմալուծւած է անդամներուն օրինական թիւը պահած ըլլալուն պատճառով, պարտաւոր են իրենց տուրքերը խրկել Կ. Կօմիտէին: Նոյնը պարտաւոր են ընել այն ընկերները, որոնք մեկուսի վայր մը կը գտնուին և դիւրութիւն չունին կապ պահպանելու իրենց պատկանած կօմիտէին հետ:

307. 12. — Իրատես դաշնակցական կը կոչուին այն ընկերները, որոնք իրենց բոլոր տուրքերը վճարած են օրինական ժամանակամիջոցին, և որոնք դատական ամբաստանութեան մը տակ չեն գտնուիր: Անոնք միայն պաշտօնի կրնան կոչուիլ — Գործադիր Մարմնի անդամ, պատգամաւոր, դատաւոր ևն:

307. 13. — Իրենց անդամական տուրքերու վճարումը ոչ-բանաւոր պատճառով ձգձգող ընկերները կը զրկուին անդամական ժողովներու մէջ քէ տալու իրաւունքէն և կը հեռացուին կօմիտէին, եթէ իւրաքանչիւր եռամսեակին վերջը վճարած չեն համապատասխան տուրքերը:

307. 14. — Այն ընկերները, որոնք տարւան

մը ընթացքին մէջ, ոչ-բանաւոր պատճառով կը ձգձգեն իրենց գէնքի տուրքին վըճարումը, կը հեռացուն կօմիտէն, և այդ մասին կը հաղորդուի կեդր. կօմիտէին:

307. 15. — կօմիտէ մը իբրև բացառութիւն կրնայ մասնաւոր դիւրութիւններ տալ իր այն անդամներուն, որոնք յարգելի պատճառով մը անկարող կը գտնուին իր ժամանակն կամ աճուածութեան վճարելու գէնքի դրամը:

## Գ.

### Կօմիտէ

307. 16. — կօմիտէ կը կոչուի նոյն տեղը բընակող դաշնակցականներու այն խմբակցութիւնը որ իրաւունք և պարտականութիւն ունի -- ա) քարոզել Հ. Յ. Դաշնակցութեան սկզբունքները, բ) դրամ հանգանակել յանուն Հ. Յ. Դաշնակցութեան, գ) թեկնածուներ պատրաստել և ընդունել Դաշնակցութեան մէջ, դ) իր քուէով մասնակցել Ամերիկայի պատգամաւորական ժողովին:

307. 17. — Հինգ դաշնակցականներ համաձայնելով կրնան կազմել կօմիտէ մը, եթէ ստանան Ամեր. կեդր. կօմիտէի վաւերացումը:

307. 18. — Մէկ քաղաքի մը մէջ մէկ կօմիտէ մը միայն կրնայ կազմուիլ. եթէ հարկ տեսնուի, այլևայլ նկատուածներով, ուրիշ մէկ

կամ աւելի կօմիտէներու, Պատգամ. ժողովի արտօնութիւնն ստանալու է:

307. 19. — Կիները կը կազմեն առանձին կօմիտէ, որ իր ներքին գործերը անկախօրէն վարելով հանդերձ, պարտաւոր է համերաշխ գործել տեղին արական կօմիտէին հետ:

307. 20. — Դաշնակցական չգտնուած վայրի մը մէջ, երբ Դաշնակցութեան համակիրներէ պիտի կազմուի կօմիտէն, հարկ եղած օրինական քննութիւնը կը կատարէ մօտակայ կօմիտէն կամ կեդր. կօմիտէի ներկայացուցիչ մը, և կը տեղեկագրէ կեդր. կօմիտէին:

307. 21. — Նորակազմ կօմիտէ մը իր վաւերացումը խնդրող նամակին կը կցէ անդամներուն մուտքերը և տարեկան անդամավճարները:

307. 22. — կօմիտէն պարտաւոր է արհեստները շարաթիւն անդամ մը անդամական ժողովներ ունենալ: Որոշուած օրը և ժամուն, անդամներու երկու երրորդի ներկայութիւնը օրինական կը համարուի ժողովը բանալու համար:

307. 23. — կօմիտէի ժողովին կրնայ ներկայ գտնուիլ իբր հիւր, ուրիշ կօմիտէի պատկանող այցելու ընկեր մը, եթէ գէթ երկու տեղացի ընկերներ կը ճանչնան ան, եթէ կօմիտէն իր անդամական այս կամ այն ժո-

- դովը դռնփակ ընել որոշած է կանխաւ :
- ՅՕԴ. 24. — Կօմիտէն զգուշանալու է ուրիշ տեղերէ եկող դաշնակցական մը անդամական ժողովի հրաւիրելէ կամ կուսակցական գաղտնիքներ հաղորդելէ անոր, մինչև որ այդ անձի նկատմամբ յանձնարարական չստանայ :
- ՅՕԴ. 25. — Կօմիտէն պարտաւոր է հոգածու ըլլալ տեղափոխուած ընկերներու մասին, անոնց հետ սերտ յարաբերութիւն պահպանելով և իհարկին յանձնարարելով դըրացի կօմիտէներուն և Կեդր. Կօմիտէին :
- ՅՕԴ. 26. — Կօմիտէ մը իրաւունք ունի մերժելու իբր անդամ ընդունիլ ուրիշ կօմիտէի մը յանձնարարած ընկերը, եթէ այս վերջինիս անդամակցութիւնը վնասակար կը համարի իր տեղական գործերուն :
- ՅՕԴ. 27. — Կօմիտէն իր յանձնարարականին մէջ յիշատակելու է Ֆէրթէ յանձնարարուածը իր տուրքերուն ո՛ր մասը վճարած է և ո՛ր մասը ապառիկ թողած :
- ՅՕԴ. 28. — Կօմիտէն պարտաւոր է իր մէջէն արտաքսուած կամ ո՛ւրիշ պատճառով հեռացուած կամ հեռացած անդամին անունը, տոհմանունը ևն. անմիջապէս հաղորդել Կ. Կօմիտէին :
- ՅՕԴ. 29. — Կօմիտէն ջանալու է հնար եղածին չափ յաճախ գումարել համակիրներու և փրօփականտի հրապարակային ժողով-

- ներ : Հրապարակային ժողովի ատենախօսները կը հրաւիրուին Կեդր. Կօմիտէի պատրաստած ցանկի վրայէն : Եթէ ցանկէն դուրս ատենախօսի մը պէտքը տեսնուի, Կօմիտէն խորհրդակցելու է այն կօմիտէին հետ, որուն կը պատկանի հրաւիրելիք ատենախօսը : Ոչ-դաշնակցական անձ մը ատենախօս հրաւիրելու համար կանխաւ ըստանալու է Կ. Կօմիտէի հաւանութիւնը :
- ՅՕԴ. 30. — Կօմիտէն պարտաւոր է տեղական պայմաններուն համեմատ միջոցներ գտնել շինարարութեան և նշանաւորութեան վարժեցնելու համար ոչ միայն ընկերները, այլ և անխտիր տեղական հայ երիտասարդութիւնը :
- ՅՕԴ. 31. — Կօմիտէն հաստատապէս պատասխանատու է իր գանձին համար :
- ՅՕԴ. 32. — Կօմիտէն իրաւունք չունի իր անդամական հասոյթներէն դոյացած գումարը՝ փրօփականտի արդէն որոշուած գործերէն դուրս (հրապարակային ժողով, ատենախօսներու ճամբու ծախք, դիւանական ծախքեր) ունէ ուրիշ նպատակի յատկացնելու, ունէ պատրակի կամ պարագայի տակ :
- ՅՕԴ. 33. — Կօմիտէն պարտաւոր է իր գանձին մէջ հաւաքուած դրամները պարբերաբար խրկել Կեդր. Կօմիտէին, պահելով միայն առձեռն գումար մը իր տեղական ընթացիկ ծախքերուն համար :

**Ծանօթ.** Դրամը կը խրկուի Կեդր. Կօմիտէի զանձապահին, նոյն ատեն լուր տալով նաև Գեդր. Կօմիտէի ատենադպրին:

**80Դ. 34.** — Ամերիկայի դաշնակցական կօմիտէներու ելլամտական տարին կ'սկսի դեկտեմբերի առաջին օրը և կը վերջանայ նոյեմբերի վերջին օրը:

**80Դ. 35.** — Կօմիտէն յունիս և դեկտեմբեր ամիսներու սկիզբէն իր վեցամեայ տեղեկագրերը կը խրկէ Կեդր. Կօմիտէին, կցելով նաև բոլոր այն տեղեկութիւնները որ Կեդր. Կօմիտէի պատրաստած հարցարանները կը պահանջեն:

**80Դ. 36.** — Դեկտեմբեր ամսու սկիզբը, և ~~առաջին~~ մինչև Պատգամ. Ժողովի գումարման օրը կօմիտէն պարտաւոր է վճարած ըլլալ իր բոլոր տուրքերը (ամսավճար, գէնքի տուրք) և ներկայացուցած ըլլալ իր հաշիւը Կեդր. Կօմիտէին: Հակառակ պարագային՝ կը սահմանափակուի անոր մասնակցութիւնը Պատգամ. Ժողովին:

**80Դ. 37.** — Կօմիտէն կրնայ շրջաբերականներ հանել Ամերիկայի կամ միայն իր շրջանի քոյր կօմիտէներուն, խրախուսելու անոնք կամ բացատրելու համար յեղափոխական գործը զարգացնելու նպատակով իր ձեռք առած այս կամ այն միջոցը և անոր արդիւնքը, ինչպէս նաև այն պարագաներուն մէջ, որոնք նախատեսուած են յօդած 72ի մէջ:

**80Դ. 38.** — Կօմիտէն է միութեան պաշտօնական կապը իր մէկ անդամին և ուրիշ դաշնակցական մարմիններու միջև: Ծայրայեղ պարագային Քայն ընկեր մը իրաւունք ունի դիմել աստիճանաբար Կեդր. Կօմիտէին, Շրջանական Խորհրդին կամ Պատգամ. Ժողովին, բայց երբեք չի խախտուի որ դաշնակցական մը շրջաբերական հանէ ընկերներու կամ կօմիտէներու հասցէին:

**80Դ. 39.** — Երբ կօմիտէ մը Դաշնակցութեան մնասարեր ընթացքի մը մէջ կը գտնուի, դատի կ'ենթարկուի Շրջ. Խորհրդին առջև, որ իրաւունք ունի այդ կօմիտէն դադարեցնելու մինչև պատգամ. Ժողովին օրը, յայտնելով այդ մասին Կեդր. Կօմիտէին, միւս կօմիտէներուն ծանուցելու համար: Ամբաստանիչ կրնան ներկայանալ թէ կօմիտէները և թէ Կեդր. Կօմիտէն:

**80Դ. 40.** — Պատգամ. Ժողովի որոշումով կօմիտէ մը կրնայ լուծեալ հռչակուիլ, եթէ հակառակը կը գործէ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրին կամ սոյն ներքին կանոնագրին, եթէ տարի մը անընդհատ անդամական ժողով չ'ունենար կամ չի վճարեր իր դաշնակցական տուրքերը:

**80Դ. 41.** — Կօմիտէն ինքնին լուծեալ կը համարուի երբ անդամներուն թիւը օրինական թւէն նւազի: Կազմալուծուած կօմիտէին բոլոր ինչքերը կը գրաւէ Կեդր. Կօմիտէն:



Գործադիր Մարմին

ՅՕԴ. 42. — Կօմիտէն ունի ատենապետ, ատենադպիր, գանձապահ, համարակալ և հաւաքիչ, որոնք կը կազմեն իր Գործադիր Մարմինը :

ՅՕԴ. 43. — Գործադիր Մարմինն իւրաքանչիւր անդամը առանձին առանձին կ'ընտրուի զազանի քւէնով, քւէներու բացարձակ առաւելութեամբ, վեց ամսան պաշտօնավարութեան համար և վերընտրելի է : Ընտրութիւնները կատարած ըլլալու են մինչև դեկտեմբեր և յունիս ամիսներու երկրորդ կիրակիները : Ընտրութեան արդիւնքը անմիջապէս կը տեղեկագրուի Կեդր. Կօմիտէին :

ՅՕԴ. 44. — Գործադիր Մարմինը կ'ստանայ և կը բանայ կօմիտէին անունով եկած նամակները և կը ներկայացնէ կօմիտէի առաջիկայ ժողովին, և կը վարէ կօմիտէի ընթացիկ գործերը, կօմիտէի որոշումներուն համաձայն :

**Ծանօթ.** Պաշտօնական ամէն զրուցիւն անդամական ժողովի մէջ միայն կը կարգացւի և ապա պահ կը դրուի կօմիտէի ատենադպիրին բով :

ՅՕԴ. 45 — Ստիպու զ ա կ ա ն պարագաներու մէջ միայն, — երբ հնար չկայ անդամական ժողով գումարելու — Գործադիր Մարմինը

կրնայ ընթացիկ գործերու համար տնօրինութիւններ ընել, որոնք պարտաւոր է ներկայացնել կօմիտէի առաջիկայ ժողովին վաւերացման :

ՅՕԴ. 46 — Գործադիր Մարմնի անդամ կըրնան ընտրուիլ այն ընկերները միայն, որոնք գէթ տարի մը անընդհատ գտնւած են Գաշնակցութեան մէջ :

ՅՕԴ. 47 — Կեդր. կօմիտէի անդամ մը (ինչպէս նաև գործիչ ընկեր մը) ընտրելի չի կրնար ըլլալ Գործադիր Մարմնի համար :

ՅՕԴ. 48 — Եթէ Գործադիր Մարմինը թոյլ, անհոգ և պարտազանց գտնուի, կօմիտէն կրնայ լուծել ան, պաշտօնավարութեան շրջանի լրացումէն առաջ, և նոր մը ընտրել :

ՅՕԴ. 49 — Ատենապետին վրայ է որ մասնաւորապէս կը ծանրանայ որոշւած օրերը կօմիտէն ժողովի հրաւիրելու տալ, ատենապետել ժողովին և հսկել անոր կարգապահութեանը : Ատենապետը կօմիտէի ուէ անդամէն աւելի պարտաւոր է հետամուտ ըլլալ ներքին կանոնագրին ճշգրիտ կիրարկութեանը : Ատենապետ և ատենադպիր կ'ստորագրեն կօմիտէին բոլոր պաշտօնական թուղթերուն տակ :

ՅՕԴ. 50 -- Ատենադպիրը կը կատարէ կօմիտէի բոլոր գրաւոր գործերը, գանձայինէն զատ : Ատենադպիրը մասնաւորապէս պա-

տասխանատու է կօմիտէի բոլոր թուղթերուն անվթար պահպանումին :

Ատենադպիրը առնւազն ունենալու է երկու տոմար, առաջինին մէջ համառօտիւ արձանագրելու համար կօմիտէական ժողովներու ատենագրութիւնները . երկրորդին մէջ՝ կօմիտէի անդամներուն անունը, տոհմանունը, ծննդեան տարին, բնագաւառը, և Դաշնակցութեան մէջ ընդունւած թւականը : Այս վերջին տոմարին մէջ կ'արձանագրելին անդամներու մասին ծանօթութիւններ (տեղափոխում, մահ, հեռացում, արտաքսում ևն, ևն) :

Ատենադպիրին քով կը գտնուի նաև սոյն կանոնագրին մէկ պաշտօնական օրինակը, որուն տակ ստորագրած ըլլալու են կօմիտէի բոլոր անդամները :

Յօդ. 51. — Գանձապահին պարտականութիւնըն է — ա) ստանալ ու պահել կօմիտէին անունովը խրկւած կամ յանձնւած բոլոր գումարները, բ) կատարել կօմիտէին որոշած բոլոր ծախքերը, գ) ունենալ արկղի տոմար մը, ուր մանրամասնօրէն նշանակելու է կօմիտէին ելքն ու մուտքը . (հրապարակաւ կատարւած հանգանակութեան գումարները առանձին-առանձին արձանագրելու է իր տոմարին մէջ, իւրաքանչիւր նւիրատուին անունովը), դ) ամէն ամիս կօմիտէին ելւումական հաշիւը ներկայացնել անդամական ժողովին, ե) կօմիտէին որոշումով, ընթացիկ ծախքերու պէտք եղած

գումարը վար դնելով, գանձին մէջ մնացած դրամները խրկել կեդր. կօմիտէին :

ՅՕԴ. 52. — Համարակալին պարտականութիւնըն է — ա) ունենալ տոմար մը ուր իւրաքանչիւր ընկերոջ անունով հաշիւ մը բացւած ըլլայ անդամավճարի ու դէնքի դրամի համար, բ) ընկերներու յիշեցնել իրենց տուրքերու վճարումը և պարտքը, և պարբերաբար կօմիտէի ժողովին տեղեկագրել այն ընկերներու անունները, որոնք անհոգ գտնւած են իրենց վճարումներուն մէջ, գ) ստանալ ու պահել կեդր. կօմիտէին ստացւած բոլոր ընկալագրերը :

ՅՕԴ. 53. — Հաւաքիչին պաշտօնն է դրամական գանձումներն ընել և յանձնել գանձապահին :

ՅՕԴ. 54. — կօմիտէին թղթակցութիւնները կը կատարելին պաշտօնական թղթի վրայ, (որ կը հայթաթուի կեդր. կօմիտէին կողմէն) ատենապետի և ատենադպիրի հարազատ անուններով ստորագրւած : Գանձալին հաշիւներու տակ նաև համարակալը և գանձապահը ստորագրելու են հարազատ անուններով : Հասարակ թղթի վրայ և կեղծ անուններով ստորագրւած գրութիւնները անվաւեր կը նկատուին :

ՅՕԴ. 55. — կօմիտէի ստացած բոլոր նամակները, շրջաբերականները ևն. ամէն տարւայ վերջը պատգամաւորին հետ կը խրկը-

ւին Պատգմ. Ժողովին, ուր Թղթակցու-  
թեան Յանձնախումբը կարևորները կը պա-  
հէ և մնացածը կ'այրէ: Կօմիտէն իր քով  
կրնայ պահել միայն դրամի ընկալագրերը:

ՅՕԴ. 56 — Ամէն կօմիտէ եթէ հարկ տեսնէ  
կրնայ ունենալ իր մասնաւոր ներքին կա-  
նոնադիրը, պայմանով որ ուէ կէտի մէջ  
չհակասէ ան Դաշնակցութեան ընդհանուր  
կամ Ամերիկայի ներկայ կանոնագրերուն:

## Ե.

### Գործիչներ

ՅՕԴ. 57. — Գործիչ կը ճանչցւին այն ընկեր-  
ները, որոնք պատգմ. Ժողովի կողմէն կամ  
անոր անունով կը հրաւիրուին աջակցելու  
Ամերիկայի մէջ դաշնակցական յեղափո-  
խական գործին տարածմանը — խօսքով ու  
գրչով:

ՅՕԴ. 58. — Գործիչները կեդր. կօմիտէէն  
կ'ստանան իրենց ապրուստին բաւող գու-  
մար մը միայն:

Ծանօթ. Ատենախօսուցեան կամ կազմակերպական  
գործի մը ճամար երբ գործիչ մը կօմիտէի մը այցելել կը հը-  
բաւիւրի, վերջինս պարտաւոր է հոգալու անոր ճամբու և  
արտակարգ ծախքերը:

ՅՕԴ. 59. — Գործիչները անդամ կը սեպւին  
կեդր. կօմիտէին, կը մասնակցին անոր Ժո-  
ղովներուն, երբ հնար ունենան, և հաւա-  
քաբար չէ՛լ չէ՛ ունին հոն:

ՅՕԴ. 60. — Գործիչի դէմ ամէն բողոք կը  
քննուի մասնաւոր ատեանի մը առջև, որը  
կը կազմեն բոլոր միւս գործիչները և Կ. Կօ-  
միտէի անդամները և Շրջ. Խորհուրդներէն  
մէյմէկ ներկայացուցիչներ, հաւասար քւէ-  
ով: Այդ ատեանը ձայներու երկու երրոր  
դի մեծամասնութեամբ կրնայ դադարեցնել  
գործիչ մը իր պաշտօնավարութենէն մինչև  
գումարումը առաջիկայ Պատգմ. Ժողովին:  
Պատգմ. Ժողովը միայն լիազօր է գործիչ  
մը իսպառ հրաժարեցնելու Ամերիկայի դաշ-  
նակցական գործէն:

## Զ.

### Կեդրօնական Կօմիտէ

ՅՕԴ. 61. — Հայ Յեղ. Դաշնակցութեան Ա-  
մերիկայի կեդր. կօմիտէն կը ներկայացնէ  
Ամերիկայի դաշնակցական կօմիտէներու  
գործադիր իշխանութիւնը: Ան է Ամերի-  
կայի Դաշնակցութեան պաշտօնական ներ-  
կայացուցիչը, թէ երկրի և թէ արտասահ-  
մանի դաշնակցական մարմիններուն, ինչ-  
պէս նաև ուրիշ հայ կամ օտար կազմակեր-  
պութիւններու առջև, և անոր միջոցով մի-  
այն կրնան կատարել կօմիտէներու բոլոր  
պաշտօնական յարաբերութիւնները վերը  
յիշուած մարմիններու հետ:

ՅՕԴ. 62. — Կեդր. կօմիտէի պարտականու-  
թիւնն է —

ա) Կէտառկէտ գործադրել Հ. Յ. Դ. Ա. մերիկայի Պատգամ. Ժողովին որոշումները.

բ) Նոր կոմիտէներ կազմակերպելու հետամուտ ըլլալ.

գ) Գործիչ և շրջուն ընկերներու միջոցով մղում տալ կոմիտէներու գործնէութեան և քննել տալ անոնց հաշիւները.

դ) Հրապարակային ժողովներու համար ատենախօսներու ցանկ պատրաստել.

ե) Ատենախօսելու իրաւունքէն զրկել այն ընկերները, որոնք անկարող կամ իրենց ընթացքով վնասակար են Գաշնակցութեան հմայքին կամ շահերուն, և կամ որոնք ամբաստանութեան տակ կը գտնուին:

զ) Հետամուտ ըլլալ որ կոմիտէներու մէջ ծագած ունէ խնդիր օրինական ճամբով շուտափոյթ լուծում մը գտնէ.

է) Շրջաբերականներով հաղորդել կոմիտէներուն երկրէն ստացած ոչ դաւադրական լուրերը, և կոմիտէներուն յիշեցնել ու բացատրել իրենց պարտականութիւնները.

ը) Կոմիտէներէն պահանջել վեցամսեայ հաշուեկշիւներ և տեղեկագրեր, առայդ պատրաստած մասնաւոր հարցարաններու միջոցով:

թ) Առաջին վեցամսեայի տեղեկագիրը (դեկտեմբերէն մինչև մայիս) ամփոփելով հաղորդել կոմիտէներուն:

ՅՕԴ. 63. — Երբ Կ. Կոմիտէն երկրէն կամ Արևմտեան Բիւրօէն կ'ստանայ յեղափոխական հանգամանք ունեցող և անյողալ պարտախնայանջող զբոսիչն յը, պարտաւոր է իր ընտրանքով ձեռնհաս ճանչցած ընկերներ խորհրդակցութեան հրաւիրել և անոնց հետ ընդհ. համաձայնութեամբ պատասխանը խմբագրել: Այդ ժողովի ատենագրութիւնը կը ներկայացուի պատգամ. Ժողովի Յեղափոխական Գործերու Յանձնախմբին:

Ծանօթ. Կ. Կոմիտէն ընթացիկ գործերու համար և սորորդակցութեան կրնայ հրաւիրել ձեռնհաս ընկերներ:

ՅՕԴ. 64. — Կեդր. Կոմիտէն կը բաղկանայ հինգ անդամներէ. կ'ընտրուի պատգամ. Ժողովի կողմէն, մէկ տարի պաշտօնավարութեան շրջանով, և վերընտրելի է:

ՅՕԴ. 65. — Կեդր. Կոմիտէի ընտրելի կրնան ըլլալ միայն այն ընկերները որոնք ընտրութեան օրէն առաջ գէթ երեք տարի անընդհատ գտնւած են Գաշնակցութեան մէջ և իրաւասու եղած են:

ՅՕԴ. 66. — Կեդր. Կոմիտէի ընտրելի չեն կրնար ըլլալ — ա) դատական ամբաստանութեան տակ գտնուող ընկերները, բ) դժբախտական անկարողութենէ զատ ուրիշ ունէ պատճառով դադրեցումի վճիռ ստացած ընկերները. գ) արտաքուստ և վերստին ընդունւած ընկեր մը, եթէ միայն Գաշնակցական ձեռնհաս ատենախմբի մը կողմէն

խառն անպարտ և սխալ վճռի մը շոհ եղած ըլ-  
լալ յայտարարուած չըլլայ :

607. 67. — Երբ ուէ պատճառով Կ. Կօմի-  
տէի անդամներէն մէկը պակսի, Կեդր. Կօ-  
միտէն իրեն անդամակցութեան կը հրա-  
ւիրէ Պատգամ. Ժողովին քւէարկած ցանկին  
մէջէն ընտրուածներէն ետք առաւելագոյն  
քւէ ստացողը : Ընտրելին իրեն եղած  
հրաւէրը ընդունելէն ետք, անոր ընտ-  
րութիւնը կը հաղորդւի Կօմիտէներուն :

607. 68. — Եթէ Կեդր. Կօմիտէին մէջ մէ-  
կէ աւելի անդամներ պակսին, Կեդր. Կօ-  
միտէն ընտրելիներու եռասպտիկ ցանկ մը  
կը պատրաստէ ու կը ներկայացնէ Կօմի-  
տէներուն : Այդ ցանկին վրայ Կօմիտէ-  
ները իրենց ընտրութիւնը կը կատարեն :  
Կեդր. Կօմիտէն նկատի առնելով իւրաքան-  
չիւր Կօմիտէի պատգամաւորական ձայնե-  
րու թիւը, ընտրութիւնը կը հռչակէ, քը-  
ւէարկութեան հանգամանքները շրջաբե-  
րականով տեղեկագրելով Կօմիտէներուն :  
Եթէ քւէարկութիւնը համեմատականի մը-  
նայ, Կեդր. Կօմիտէն վիճակ կը ձգէ ընտ-  
րելիներու միջև : Քւէարկութեան այս գոր-  
ծողութեանը ներկայ կ'ըլլայ իբր վկայ,  
Կեդր. Կօմիտէի Ժողով գումարած վայրի  
Կօմիտէին Գործադիր Մարմինը :

607. 69. — Եթէ Կեդր. Կօմիտէի անդամ-  
ներու թիւն կէսէն աւելին պակսի (3 ան-

դամ), արտակարգ Պատգամ. Ժողով կը գու-  
մարւի, նոր ընտրութիւն կատարելու հա-  
մար :

607. 70. — Երբ Կեդր. Կօմիտէի անդամնե-  
րէն մէկը զեղծում մը կը գործէ, ընկե-  
րական ատեանի մը կը հրաւիրուի, որը կը  
կազմեն Կեդր. Կօմիտէի բոլոր միւս ան-  
դամները, գործիչները և Շրջ. Խորհուրդ-  
ներու մէջ մէկ ներկայացուցիչները, հաւա-  
սար ձայնով : Ատեանը լիազօր է պաշտօ-  
նանկ ընելու ամբաստանածը :

607. 71. — Երբ Կեդր. Կօմիտէն պարտա-  
գանց կամ ապօրինի ընթացքի մը մէջ կը  
գտնուի, անկէ բացատրութիւն կրնայ պա-  
հանջել ամէն Կօմիտէ :

Եթէ բողոքող Կօմիտէն իր ստացած բա-  
ցատրութիւնը գոհացուցիչ չնկատէ, կրնայ  
դիմել իր Շրջանի Խորհուրդին և վերջինիս  
չգոյութեան պարագային՝ իր շրջանի Կօ-  
միտէներուն : Շրջանական Խորհուրդը եթէ  
համակարծիք գտնուի բողոքող Կօմիտէին,  
գոհացում կը պահանջէ Կեդր. Կօմիտէէն.  
և եթէ գոհացում չստանայ և խնդիրը  
ծանրակշիռ նկատէ, կը հրաւիրէ Շրջանա-  
կան Ժողով որ իր պատասխանատուութեան  
տակ շրջաբերականներով կը դիմէ միւս  
շրջաններու Կօմիտէներուն՝ արտասովոր  
Պատգամ. Ժողով գումարելու :

Եթէ բոլոր Կօմիտէներու երկու եր-

բորդը համաձայն գտնւի այդ Շրջանական  
Ժողովին, կեդր. Կօմիտէն պարտաւոր է  
Սրասսովոր Պատգամ. Ժողովի հրաւէր խըր-  
կելու Կօմիտէներուն: Յանցաւոր կողմը —  
ամբաստանեալ կեդր. Կօմիտէն կամ ամ-  
բաստանող Շրջանական Ժողովը — կը հա-  
տուցանէ արտասովոր Պատգամ. Ժողովին  
բոլոր ծախքերը:

### Է.

#### Կեդրոնական Կօմիտէի Դիւան

ՅՕԴ. 72. — Կեդր. Կօմիտէն ինքը կ'ընտրէ  
իր դիւանը որ կը բաղկանայ հետեւեալնե-  
րէն — ատենապետ, ատենադպիր, գանձա-  
պահ և համարակալ:

ՅՕԴ. 73. — Ատենապետին պարտականու-  
թիւնն է —

- ա) Ատենապետել կեդր. Կօմիտէի Ժո-  
ղովներուն.
- բ) Ատենադպիրին հետ խորհրդակցելով  
հոգածու ըլլալ որ կեդր. Կօմիտէի ընթաց-  
իկ գործերը անթերի և անյապաղ առաջ  
տարւին.

գ) Ատենադպիրին հետ բանալ և կարդալ  
Կեդր. Կօմիտէին եկած նամակները:

դ) Պահել Հ. Յ. Դ. Ամեր. Կեդր. Կօմի-  
տէին անդլիերէն և հայերէն կնիքները և  
ստորագրել ու կնքել ատենադպիրին հետ,  
և իհարկին գանձապահին և համարակալին

հետ, պաշտօնական բոլոր Թուղթերուն  
տակ:

ՅՕԴ. 74. — Ատենադպիրին պարտականու-  
թիւնն է —

ա) Կեդր. Կօմիտէի Ժողովներուն համա-  
ռօտ ատենադրութիւնը արձանագրել յա-  
տուկ տոմարի մը մէջ.

բ) Գանձային խնդիրներէն զատ բոլոր  
կարգի գրութիւնները — շրջաբերականներ  
նամակներ ևն. — պատրաստել.

գ) Ամերիկայի բոլոր Կօմիտէներու ման-  
րամասն անդամական ցանկը ունենալ վեց-  
ամսէ վեցամիս լրացնելով ան՝ Կօմիտէնե-  
րէ ստացւած տեղեկագրերուն վրայ և նը-  
շանակել հոն մահերը, հրաժարումները,  
տեղափոխումները, դադարեցումները և  
արտաքսումները.

դ) Կեդր. Կօմիտէի անունով եկած բոլոր  
գրութիւնները բանալ, ատենապետին հետ,  
և իր բնակած վայրը գտնուող անդամակից-  
ներուն կարգալ և ստորագրել տալէ ետք,  
նոյնը խրկել հեռուն գտնուող անդամակից-  
ներուն անոնց կարծիքները խնդրելով.

ե) Խնամով պահել Կեդր. Կօմիտէի ա-  
նունով իրեն յանձնուած բոլոր գրութիւն-  
ները, Պատգամ. Ժողովին ներկայացնելու  
համար.

զ) Գանձապահին ընկալագրերը ստորո-  
գրել, ատենապետին հետ, և մասնաւոր տո-  
մարի մը մէջ արձանագրել այդ գումար-  
ները.

է) Պատրաստել Պատգամ. ժողովին մատուցանելի տարեկան մանրամասն տեղեկագիրը:

80Գ. 75. — Գանձապահին պարտականութիւնն է.

ա) Ստանալ կեդր. կօմիտէի անունով եկած բոլոր գումարները, և ընկալազիր խրկել ատենադպրին միջոցով.

բ) Դրամ յանձնել, խրկել կամ ծախքեր ընել կեդր. կօմիտէի գրաւոր որոշումին վրայ, վաւերացւած ատենապետի և ատենադպրի ստորագրութիւններով.

գ) Արկղի տամարի մը մէջ կանոնաւորապէս և մանրամասնօրէն արձանագրել կ. կօմիտէի ելեմուտքը:

դ) Իր կատարած վճարումներու և ծախքերուն ընկալագրերն ու արդարացուցիչ տօքիւմանները յանձնել համարակալին.

ե) կեդր. կօմիտէի իւրաքանչիւր ժողովին ներկայացնել իր արկղին հաշիւը:

80Գ. 76. — կեդր. կօմիտէն հաստատար պատահանքն է գանձապահին յանձնւած բոլոր դրամներուն համար և հետեւարար ազատ է գանձին ապահովութեան համար ընել իր անհրաժեշտ սեպած կարգադրութիւնները:

80Գ. 77. — Համարակալին պարտականութիւնն է —

ա) կեդր. կօմիտէի ելեմուտքը արձանագրել կրկնատոմարի դրութեամբ.

բ) կրկնատոմարի դրութեամբ արձանագրել կօմիտէներու հաշիւները.

գ) կօմիտէներու կողմէն եկած հաշիւները քննել, ստուգել թէ բոլոր անդամները վճարած են իրենց տուրքերը, և իր դիտողութիւններով ներկայացնել կեդր. կօմիտէին:

80Գ. 78. — կեդր. կօմիտէն պարտաւոր է իր գանձին մէջ գտնւած պատրաստ դրամը, ինչպէս նաև բոլոր գրութիւնները բերել դնել Պատգամ. ժողովին օրը, պատկան յանձնախմբերու տրամագրութեան տակ:

## Ը.

### Շրջանական Ժողով եւ Խորհուրդ

80Գ. 79. — Ամերիկայի կօմիտէները չորս խումբի կը բաժնուին աշխարհագրական տեսակէտէ — ա) Պօսթընի շրջան, բ) Նիւ Եօրքի շրջան, գ) Նիքակօի շրջան, դ) Ֆրէզնօի շրջան, որոնք քիչ բացառութեամբ կը պարփակեն բոլոր դոյութիւն ունեցող կօմիտէները:

Ծանօթ. կօմիտէներու բազմանալուն և տեղական պահանջներուն համեմատ, Պատգամ. ժողովը նոր շրջաններ կ'ստեղծէ:

80Գ. 80. — Պօսթընի Շրջանին կը պատկանին հետեւեալ վայրերու կօմիտէները. Լին, Լօուէլ, Լօրէնս, Հէվլըհիլ, Մանչէսթըր, Միլֆըրտ, Նէշլէ, Նիւպրիփօրթ, Ուայթհիւսփիլ, Ուսթըր, Ուօթըրթաուն, Ուօնսաքէթ, Չըլսի, Պրիմուօթըր, Պօսթըն, Պօսթընի Տիկնանց, Սէյլըմ, Սէնթրալ Փօյս, Փրօվիտէնս, Փօրթլէնտ, Բանքըրտ, Գէյմպրիձ,

Յիշւոյրի, և առաջիկային անոնց մօտ կազմւելիք կօմիտէները :

Նի- Ների Շրջանն կը պատկանին Հետեւեալ վայրերու կօմիտէները . ՀարթՓըրտ, Թրօյ, Թօմսընփիլ, Իւթիբա, Նիւ Եօրթ, Նիւ-Հէյփըն, Նիւ Պրիթըն, Ուէսթ Հօսօքըն, Պրիմփօրթ, Պրֆալօ, Փաթըրքըն, Քէմօըն, Յիւատէլֆիա, Նիւարթ, Բիչմօնտ և Յիւատէլֆիայի, Նիւ Եօրթի, Թրօյի Տիկիններու կօմիտէները, և առաջիկային անոնց մօտերը կազմւելիք կօմիտէները :

Շիֆօն շրջանն կը պատկանին Հետեւեալ վայրերու կօմիտէները . Իսթ Սէյնթ Լուիզ, Ուէսթ Փուլմն, Ուէսթ Փուլմնի տիկիններու, Ուօքէկըն, Շիքսօ, Կրէնտ Բէփիտզ, Տիթրօիթ, Պրէնսֆըրտ և Համիլթըն (Քանտտ) և առաջիկային անոնց մօտ կազմւելիք կօմիտէները :

Տրէվնի շրջանն . կը պատկանին Ֆրէշնօի և առաջիկային անոր մօտերը կազմւելիք կօմիտէները :

80Ի. 81. — Շրջանական ժողով կը գումարուի — ա) Շրջանի կօմիտէի մը կողմէն Կեդր. կօմիտէի դեմ բողոք մը լսելու, — բ) Շրջանի մը կօմիտէի դեմ եղած ամբաստանութիւնը լսելու և վճիռ տալու, (տես յօդ. 72 և 40) — գ) Շրջանի գործերու բարելաւութեանը մասին խորհրդակցելու և միջոցներ գտնելու, — դ) Շրջանական Խորհուրդը ընտրելու :

80Ի. 82. — Շրջանական Խորհուրդը կը բաղ-

կանայ Հինգ Հոգիէ, մէկ տարի պաշտօնավարութեան շրջանով և վերընտրելի է :

80Ի. 83. — Շրջանական Խորհուրդը պարտական է այցելել իր շրջանի կօմիտէները, հսկել անոնց համարակալութեան վրայ և օգնել զարգացնելու անոնց փրօփականտի բոլոր գործերը (Հրապարակային հանգանակութեան, համակրական, և անդամական ժողովներ) :

Շրջանական Խորհուրդը կը համարուի իր շրջանի կօմիտէներու առաջին վերաքննիչ Ատեանը :

Թ.

Կազմակերպութեան Դէմ Յանցանքներ

80Ի. 84 — Կազմակերպութեան հանդէպ յանցաւոր կը նկատուի այն ընկերը որ —

ա) Դաշնակցական կարգապահութեան դէմ անաստող ընթացք մը կը բռնէ :

բ) Կօմիտէին շարժական մարդոց կը պատմէ թէ ով հակառակ քէ տւած է թեկնածուի մը ընդունելութեան կամ անպատ խօսած է անոր մասին :

գ) Սուտ ու սխալ տեղեկութիւն տւած է իր մասին կօմիտէի մէջ ընդունելութեան համար :

դ) Գոհնիկ կամ անպատշաճ լեզու մը կը գործածէ կօմիտէի ժողովին մէջ :

ե) Դիտմամբ կը խանգարէ կօմիտէի ժողովը կամ անպատշաճ վարմունք մը կ'ուենայ հոն :



դ) Կօմիտէի ժողովը կը մտնէ արեւեցած վիճակի մէջ :

է) Վկայութեան կանչուած ըլլալով դաշնակցական դատական ատեանի մը առջև, կը մերժէ երթալ հօն վկայելու :

ը) Կօմիտէի կամ ուրիշ ուէ դաշնակցական մարմնի որոշումները կամ դաշնակցութեան յեղափոխական գաղտնիքը կազմող տեղեկութիւններ կը հաղորդէ ոչ — դաշնակցականներու :

թ) Կեդր. Կօմիտէի կամ Պատգ. ժողովի այն տեղեկութիւններն ու որոշումները, որոնք այդ մարմիններու մէջ մնալու սահմանուած են — կը հաղորդէ այդ մարմիններէն դուրս գտնող ընկերներու :

ժ) Չարամտութեամբ կը զրպարտէ իր ընկերը :

Ճա) Քսութեամբ և բամբասանքներով երկպառակութիւն կը սերմանէ ընկերներու մէջ :

Ժբ) Գիտութեամբ երեսի վրայ կը ձգէ կամ կը մերժէ կատարել իրեն յանձնուած պաշտօն մը :

Ժգ) Կաղմակերպութեան անունը չարաչար կը գործածէ դրամական շահու համար :

Ժդ) Կօմիտէին պատկանող ուէ գումար կամ ինչք կ'իւրացնէ, և կամ չարաչար կը գործածէ կօմիտէին պատկանող գումարներ :

Ժե) Դաշնակցական հանգամանքէն օգտուելով ընկերներէ պարտքեր կը վերցնէ և չի վճարեր :

ժզ) Արեւցողութեամբ, անգործ թափառելով, խաղամոլութեամբ և կամ ուրիշ անբարոյական արարքներով դայթակղութիւն կը պատճառէ իր ընկերներուն և հասարակութեանը :

ժէ) Քրէական յանցանք մը կը գործէ՝ պատժելի ամբերիկեան օրէնքով :

## Ժ.

### Պատիժ Եւ Դատարան

307. 85. — Ուէ ընկեր որ կը բռնաբարէ կազմակերպութեան սկզբունքները և կամ ներկայ կանոնադրին դէմ կը մեղանչէ, — կ'ենթարկուի դրամական պատճառի կամ յանդիմանութեան կամ դատարանի կամ արտատեսի, — նայելով թէ ինչպէս կը տրամադրեն սոյն կանոնադրին յօդուածները, կամ կօմիտէի մը ներքին կանոնադրը, կամ կօմիտէի մը ատեանը :

307. 86. — Յանդիմանութեանը գրաւոր կը պատրաստուի և կօմիտէի ժողովին մէջ, դատապարտուած ընկերով ներկայութեամբ կը կարդացուի ատենապետէն :

Եթէ ընկերը խոյս տայ որոշուած օրը ներկայանալ և յանդիմանութիւնը լսել, կը զրկուի Դաշնակցութեան բոլոր իրաւունքներէն, մինչև օրինական կարգով յանդիմանութիւնը չունկընդրէ :

307. 87. — Դատարանի պատիժը կարելի է նշանակել ո՛չ աւելի, երկար քան երեք տարի :

307. 88. — Բոլոր դատավարութիւնները տեղի կ'ունենան Դատավարութեան Հրահանգին համաձայն, որմէ օրինակ մը կը գըտնուի իւրաքանչիւր կօմիտէի քով :

### ԺԱ.

#### Բողոք Դատավճռի Դէմ

307. 89. — Կօմիտէի մը դատավճռին դէմ բողոքը կ'ուղղուի Երջանական Խորհուրդին. Երջ. Խորհուրդի մը դատավճռին դէմ բողոքը կ'ուղղուի Պատգ. Ժողովին : Յաջորդական այս կարգին հակառակ արւած բողոքները նկատի չեն առնուիր : Բոլոր բողոքները պէտք է ներկայացնել դատավճիռը հաղորդուելու օրէն հաշւած մինչև 15 օր :

307. 90. — Բողոքարկուն իր բողոքագիրը կ'ուղղէ կօմիտէին, որ այդ գրութիւնը դատին վերաբերած բոլոր թուղթերուն հետ կը խրկէ Երջանական Խորհուրդին, լուր տալով միանգամայն կեդր. կօմիտէին, Կօմիտէն պատասխանատուութեան կ'ենթարկուի, եթէ բողոքը ստանալէն ետք մինչև եօթը օր, բոլոր վերոյիշեալ գրութիւնները չյանձնէ պատկան մարմնին :

Կօմիտէի վճիռը պարտաւորելու է մինչև չբեկանուի Երջ. Խորհուրդէն :

307. 91. — Եթէ ուէ պատճառով Երջանը չունի Երջանական Խորհուրդ մը օրինաւորապէս ընտրւած, այն ատեն կեդր. կօմիտէն կը հրաւիրէ Երջանի կօմիտէները մէկ մէկ պատուիրակ ընտրելու, որոնք որոշւած օր մը հաւաքուելով որոշ տեղ մը, կ'ընտ-

րեն հինգ հոգիէ յանձնախումբ մը, որ կը գործէ իրբև վերահսկելու Արեւմտ. Երջ. Խորհուրդի հաւասար իրաւասութեամբ :

307. 92. — Կօմիտէի ամէն անգամ կրնայ բողոքել իր կօմիտէի դատավճռին դէմ (տուգանք, յանդիմանութիւն, դադարեցում կամ արտաքում) :

307. 93. — Երջանական Խորհուրդը կրնայ հաստատել կօմիտէին վճիռը կամ բեկանել : Երկրորդ պարագային նոր դատ մը կը կատարէ լուր տալով շահունի (interested) կողմերուն : Որոշւած օրը անոնք ներկայ ըլլան թէ ոչ, Երջ. Խորհուրդը կը քննէ դատը և կուտայ իր որոշումը :

Երջ. Խորհուրդին վճիռը պարտաւորելու է, մինչև չբեկանուի Պատգամ. Ժողովի կողմէն :

307. 94. -- Եթէ ուէ կողմ կ'ուզէ բողոքել Երջ. Խորհուրդի վճռին դէմ, իր բողոքագիրը կ'ուղղէ կեդր. կօմիտէին, առաջիկայ Պատգամ. Ժողովին ներկայացնելու համար :

307. 95. — Պատգամ. Ժողովի Բողոքներու Յանձնախումբին առջև կը հրաւիրուին երկու կողմերը այն ատեն միայն, եթէ բողոքագիրը պատճառարանւած ըլլայ թէ դատավարութեան մէջ անկանոնութիւն, խեղճութիւն կամ անարարութիւն տեղի ունեցած է : Յանձնախումբին առջև նոր դատ չի կրնար տեղի ունենայ, այլ կրնայ խօսուիլ և վկայուիլ ֆֆայն քուրթին վերայիշեալ կէտերը արտաքումը համարելու օրէն ուրիշ :

307. 96. — Բողոքներու Յանձնախումբը Պատգամ. Ժողովի վաւերացումին կ'ենթար-

կէ իր եզրակացութիւնները և կը յանձնարարէ հարկաւոր դատածը: Պատգամ. Ժողովի որոշումը պաշտօնապէս կը հաղորդուի կեդր. Կօմիտէի կողմէն պատկան կօմիտէին իգործադրութիւն:

ՅՕԴ. 97. — Կօմիտէի մը կամ Շրջանական Խորհրդի մը դատավճռին դէմ կ. Կօմիտէն կրնայ բողոք բառնալ պատշաճ եղանակով, եթէ ուէ թերութիւն մը, անկանոնութիւն մը կամ աչառութիւն մը նշմարէ դատաւարութեան մէջ:

## ԺԲ.

### Երաշխատութեան Գումար

ՅՕԴ. 98. — Երբ ընկեր մը կամ ընկերներ իբրև ամբաստանեալ կամ ամբաստանիչ կը ներկայանան գաշնակցական ատեաններու առջև, կամ երբ վերսինսնան կը դիմեն իրենց դէմ արձակած վճռի մը համար, պարտաւոր են ձեռնհաս մարմնի որոշած քանակութեամբ երաշխաւորութեան գումար մը թողնել իրենց պատկանած կօմիտէին կամ կեդր. կօմիտէին ձեռքը: Այդ գումարներուն ընկալադրերը դատուող կողմերը պարտաւոր են ներկայացնել դատական ատեանին:

ՅՕԴ. 99. — Ատեանի վճռին համաձայն, դատապարտածի կամ դատապարտածներու երաշխաւորութեան գումարներէն կը հոգացւին ատեանին ծախքերը, և մնացածը կը վերադարձուի իրենց տէրերուն:

ՅՕԴ. 100. — Ամբաստանեալ կամ ամբաստանող երբ կը մերժեն երաշխաւորութեան գումարը վճարել, ատեանը տեղի չ'ունենար, և վճարել Բերթօլը իբր կասկածելի կը հեռացուի կուսակցութենէն անօրհաս: Ձեռնհաս մարմինը իրեն կը վերապահէ գործը քննել և գոցել, հեռացած կողմին բացակայութեանը:

## ԺԳ.

### Վերահաստատում

ՅՕԴ. 101. — Ուէ ընկեր որ կօմիտէէ մը հեռացած է իր տուրքերը չվճարելուն համար (յօդ. 13—14), կրնայ նորէն ընդունուիլ տարի մը ետք, կանխիկ վճարելով մէկ տարւան մը տուրքերը, եթէ ստանայ կօմիտէի քէններու մեծամասնութեան հաւանութիւնը:

ՅՕԴ. 102. — Անոնք որ կամովին հրաժարած են կօմիտէէ մը, առանց պարտք թողնելու, և առանց իրենց մասին արձակած վճռէ մը խուսափած ըլլալու, իբր թեկնածու անդամներ կը նկատուին և կ'ընդունուին համաձայն յօդ. 3 և 8:

ՅՕԴ. 103. — Դատավճռէ մը իուստփելու համար հրաժարած ընկերները չեն կրնար վերստին ընդունուիլ մինչև չհամակերպին իրենց մասին տրւած վճռին, գրաւոր ներում չ'ինդրեն դատավճռէն խուսափած ըլլալուն համար, և դրամական տուգանք մը չվճարեն:

ՅՕԴ. 104. — Կօմիտէն կամ Շրջ. Խորհուրդը կրնայ՝ երբ նոր վկայութեան մը կամ մեղմացուցիչ պարագայի մը հանդէպ գտնուի, կամ ժամանակ անցնելէ ետք դադարեցումի տւողութիւնը չափազանց համարէ՝ քէններու երկու երրորդի առաւելութեամբ վերջ տալ դադարեցումին, և դատապարտած ընկերը ներս ընդունիլ լուր տալով Կեդր. Կօմիտէին:

ՅՕԴ. 105. — Մէկ անգամ արտաքսած ընկեր մը կրնայ վերստին ընդունուիլ Դաշնակցութեան մէջ —

ա) Եթէ մեղմացուցիչ պարագաներ կամ արդարացուցիչ նոր վկայութիւններ երեւան եկած ըլլան:

բ) Եթէ ստուգելի թէ իր արտաքսումին հետևող ժամանակամիջոցին այդ անձը գոհացուցիչ կերպով յարեփոխած է իր վարմունքը:

Արտաքսած անգամ մը վերստին ընդունելու իրաւունքն ունին միայն անոր դատավճիռը արձակող մարմինները (Կօմիտէ կամ Շրջ. Խորհուրդ կամ Պատգամ. Ժողով):

ՅՕԴ. 106. — Վերահաստատումի մասին ամէն առաջարկ գրաւոր պէտք է ներկայացուի Կեդր. Կօմիտէին, որ իր կարծիքին հետ միասին կը հաղորդէ ձեռնհաս մարմին. վերջինս գործը քննելէ ետք՝ առաջարկը քէի կը դնէ: Եթէ երկու քէ հակառակ ըլլայ, արտաքսածը չ'ընդունուի:

Այս մերժումէն վեց ամիս ետքը նոյն անձը վերստին կրնայ դիմել նոյն առաջարկով:

ՅՕԴ. 107. — Կօմիտէէ մը դադարեցած կամ արտաքսած ընկեր մը չի կրնար ընդունուիլ ուրիշ Կօմիտէի մէջ:

## ԺԴ.

### Պատգամաւորական Ժողով

ՅՕԴ. 108. — Պատգամ. Ժողովը Ամերիկայի դաշնակցականներու օրէնսդրական, վարչական, դատական և ներկայացուցիչ գերագոյն մարմինն է Ամերիկայի մէջ և կը գումարուի պարբերաբար տարին անգամ մը, դեկտեմբեր 25ին, կամ անոր մօտերը:

ՅՕԴ. 109. — Արտասովոր Պատգամ. Ժողով կը գումարուի — ա) երբ Կ. Կօմիտէն արտասովոր և սախլողական գործի մը համար, բոլոր Կօմիտէներու խորհրդակցութիւնը և հաւաքական տնօրինութիւնը անհրաժեշտ կը գտնէ, բ) երբ Կօմիտէները հարկ կը տեսնեն, (տես յօդ. 72) գ) երբ Կ. Կօմիտէն կազմալոյծ վիճակի մէջ կ'իյնայ (տես յօդ. 70):

ՅՕԴ. 110. — Պատգամ. Ժողովը կ'ընտրէ պատգամաւորներ 2. Յ. Դ. Ընդհ. Պատգամ. Ժողովին մասնակցելու յանուն Ամերիկայի Դաշնակցութեան:

307. 111. — Պատգամ. Ժողովը կ'ունենայ այլ և այլ յանձնախումբեր ըստ հարկին — (Հաշ-ւեքննիչ, Օրակարգի, Վերաքննիչ, Յեղա-փոխական Գործերու, ևն. ևն) — որոնց գործավարութեան եղանակը ճշգրտած է Պատգամ. Ժողովի ներքին կանոնադրու-թեամբ:

307. 112. — Պատգամ. Ժողովը կ'ստանայ Կ. Կօմիտէի և Կօմիտէներու համարատու-թիւնը (տեղեկագիրն ու հաշւեկշիռները) և հարկաւոր տնօրինութիւնները կ'ընէ պար-տադանց մարմիններու (Կեդր. Կօմիտէի կամ Կօմիտէներու) կամ գործիչ ընկերնե-րու նկատմամբ:

307. 113. — Պատգամ. Ժողովը լսել է ետք երկրի մարմիններէ ստացած պահանջները և Արևմտեան Իւրօփ տարեկան տեղեկա-գիրը (Իհարկին նաև Յեղափ. Գործերու Յանձնախմբին տեղեկագիրը) կ'որոշէ Ամե-րիկայի Դաշնակցութեան դրամական օժան-դակութեան վայրը և կուտայ որոշումներ Ա-մերիկայի Դաշնակցութեան առաջիկայ շըր-ջանի գործնէութեան համար:

307. 114. — Պատգամ. Ժողովը կ'ընտրէ Կ. Կօմիտէն, եռապատիկ ցանկի մը վրայ, գաղտնի քէտարկութեամբ, քէններու եր-կու երրորդի առաւելութեամբ:

Քւէտարկութենէն առաջ իւրաքանչիւր ընտրելիի մասին խորհրդակցութիւն կը կա-

տարի, կամ կարծիքներ կը յայտնին ընտ-րելիին բացակայութեանը:

307. 115. — Պատգամ. Ժողովը միայն իրա-ւունք ունի գործիչ ընկերներ հրաւիրելու կամ նշանակելու, կամ արդէն եղածները պահելու կամ հրաժարեցնելու:

307. 116. — Պատգամ. Ժողովին որոշումները պարտաւորիչ են բոլոր Կօմիտէներուն հա-մար:

307. 117. — Պատգամ. Ժողովի որոշումնե-րուն դէմ ամէն բողոք յաջորդ Պատգամ. Ժողովին միայն կրնայ ներկայացուիլ:

307. 118. — Կեդր. Կօմիտէն պարտաւոր է Պատգամ. Ժողովի գումարումէն երկու ա-միս առաջ (մինչև նոյեմբերի առաջին կի-րակին) ա) հաղորդել բոլոր Կօմիտէներուն Պատգամ. Ժողովի գումարման օրն ու տեղը բ) պահանջել անոնցմէ իրենց տարեկան հաշւեկշիռներն ու տեղեկագրերը, որոշ հարցարանի մը համաձայն. գ) թելագրել Պատգամ. Ժողովի ներկայացուիք խնդիր-ներ. դ) խնդրել որ տուրքերու հաշւէն ա-պառիկ ունեցող Կօմիտէները փութան ի-րենց հաշիւները գոցել և դրամը հասցնել Կեդր. Կօմիտէին:

307. 119. — Ամէն Կօմիտէ կը մասնակցի Պատգամ. Ժողովին իր անդամներու թւին համեմատութեամբ քէններով:

Օրինական թւի վրայ իւրաքանչիւր քսան

անդամի համար մէկ ձայնի յաւելում կ'ունենայ կօմիտէն: Այսպէս հինգ անդամ ունեցող կօմիտէն՝ մէկ ձայն, քսանհինգ անդամ ունեցողը՝ երկու ձայն, քառասուն և հինգը՝ երեք ձայն, վաթսուներկուը՝ չորս ձայն, ութսուներկուը՝ հինգ ձայն, և այսպէս յաջորդաբար:

307. 120. — Պատգամ. Ժողովին չեն կրնար մասնակցիլ այն կօմիտէները որոնք իրենց տարեկան տուրքը չեն վճարած կանխաւ, կամ գէթ պատգամաւորին հետ չեն խրկած վերջին պահուն:

Իսկ այն կօմիտէները որոնք իրենց տուրքերուն մէկ մասը միայն վճարած են, անոնց պատգամաւորները կը մասնակցին Պատգամ. Ժողովին միայն խորհրդակցական ձայնով:

307. 121. — Այն նորակազմ կօմիտէները, որոնց վաւերացումը Պատգամ. Ժողովի գումարման օրէն գէթ վեց ամիս առաջ տեղի ունեցած չէ, խորհրդակցական ձայն միայն կրնան ունենալ, պայմանով որ ապառիկ հաշիւ չունենան:

307. 122. — Պատգամաւոր կրնան ընտրուիլ միայն իրաւասու (տես յօդ. 12) դաշնակցականները, և անոնց վկայագրին մէջ այս պարագան մասնաւորապէս կը յիշատակուի:

307. 123. — Իւրաքանչիւր պատգամաւոր մէկ քէ միայն կրնայ ունենալ և մէկ կօմիտէ ներկայացնել:

307. 124. — Կեդր. կօմիտէի անդամ մը կամ գործիչ մը պատգամաւոր չի կրնար ընտրուիլ:

307. 125. — Կ. կօմիտէն հաւաքաբար մէկ քէով կրնայ մասնակցիլ Պատգամ. Ժողովին, իր այդ իրաւունքը յանձնելով իր անդամներէն մէկուն: Կեդր. կօմիտէի միւս անդամները ներկայ կը գտնուին Պատգամ. Ժողովին և կը մասնակցին վիճաբանութիւններու, բայց միայն խորհրդատու ձայնի իրաւունքով:

307. 126. — Գործիչ ընկերները հաւաքաբար մէկ քէով կը մասնակցին Պատգամ. Ժողովին, իրենց այդ իրաւունքը յանձնելով իրենցմէ մէկուն: Միւս գործիչները ներկայ կը գտնուին Պատգամ. Ժողովին և կը մասնակցին վիճաբանութիւններուն, բայց միայն խորհրդակցական ձայնի իրաւունքով:

307. 127. — Պատգամաւորներու երկու երրորդի ներկայութիւնը օրինական կը սեպուի Պատգամ. Ժողովը բացած յայտարարելու որոշած օրը և ժամուն:

307. 128. — Պատգամ. Ժողովը ունի իր ներքին կանոնադրեր:

## ԺԵ.

### Գործնէութեան Դադարում

307. 129. — Եթէ ուէ քաղաքական կամ այլ պատճառներով Դաշնակցութիւնը դադրե-

ցնէ իր գոյութիւնը Ամերիկայի մէջ, վերջին կեդր. Կօմիտէն կամ Կօմիտէն պարտաւոր է յանձնել Արևմտեան Բիւրօին, կամ «Դրօշակ»ի խմբագրութեան և կամ ասոնք փոխարինող ձեռնհաս դաշնակցական մարմին, Ամերիկայի Դաշնակցութեան պատկանող ամէն կարգի անշարժ ու շարժուն գոյք կամ հնչուն դրամ, և դիւանական բոլոր գրութիւնները:

## ՔԶ.

### Յաւելում եւ Փոփոխում

807. 130. — Պատգամ. Ժողովը միայն կրնայ յաւելումներ և փոփոխութիւններ կատարել սոյն կանոնագրին մէջ:

Սոյն կանոնագրին ուէ յօդուածը փոփոխելու կամ ջնջելու մասին ամէն առաջարկ, ինչպէս նաև անուղղակի կերպով նոյն նըպատակին ձգտող ամէն նոր առաջարկ, իր պատճառարանութիւններով մէկտեղ կը ներկայացուի Կ. Կօմիտէին, ամէնէն ուշ հոկտեմբերի սկիզբը, որպէսզի Կ. Կօմիտէն Պատգամ. Ժողովին ներկայացուելիք հարցերու ցանկին մէջ դնելով անոնք՝ ներկայացնէ Կօմիտէներու քննութեանը: Առանց այս ձևակերպութեան, ուղղակի Պատգամ. Ժողովին բերուած կամ հոն յարուցուած այդպիսի առաջարկներ նկատի չեն առնուիր, այլ կը յանձնուին Կ. Կօմիտէին որ յաջորդ Պատգամ. Ժողովին ենթարկէ, պատշաճ եղանակով:





